

ԼԵՎՈՆ ՄԻՐԻԶԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՍՈՒՐԲԳՐԱԿԱՆ ԵՐԿԻՐ*

Այն իրողությունը, որ Հայաստանն առաջինն է պետականորեն ընդունել քրիստոնեական պետությունը, պեսար է դիտարկել որպես պատմական անհրաժեշտություն։ Այդ անհրաժեշտության արմատները շատ հիմ նա, ոչ պակաս կարենոր, քան Ք. Հ. 3-րդ դարի վերջի և 4-րդ դարի սկզբի պատմական, քաղաքական և հասարակական հանգամանքներն ու շարժադիմերը։

Պատահական չէ, որ մեսրոպատառ անդրամիկ կոթողային Գիրքը եղավ Աստվածաշունչը։ Այն ոչ միայն հավաստ հանգանակ էր, այլև այն ամենահեղինակավոր վկայագիրը, որն իր բազում դրվագներով առնչվում էր Հայոց պատմությանը։ Բաստակերպ հայ ազգի ծագումնաբանական կապը նոր աշխարհի մարդկության համապետ Նոյի հետ, ինչպես նաև նախաշրինեղելյան և ետշրինեղելյան քաղաքակրթության առաջացման գործում Հայաստան աշխարհի ուղղակի և բացադիկ կարենոր դերը։

Դարեւ շարունակ բոլոր նրանց համար, ովքեր առաջնորդվել են մարդկային բանականությամբ, Աստվածաշունչը հանդիսացել է հնագույն ժողովուրդների տարեկրություն, նախաշրինեղելյան և ետշրինեղելյան դարաշրջանների կարևորագույն իրադարձությունների եզակի հիշատակարան։ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ, ԱՍՏՎԱԾՍԸԾՈՒՆՉ ԳԻՐՔ անվանման մեջ ի սկզբանե շեշտված են երկու գլխավոր հանգամանքներ, առաջին՝ Արարշի ներկայությունը մարդկային ցեղի բարոյական հատկանշների ձևավորման գործում, երկրորդ՝ Ակարազրվող երևույթների, իրադարձությունների ճշմարտապատում լինելը։

Հակառակ տարախոն գիտական այրերի հավակնու դատողությունների, զարգացող գիտությունն իր բոլոր ուղղություններով շարունակաբար հաստատել և հաստատում է Աստվածաշնչի տվյալների ու տեղեկությունների հավաստիությունը։ Զորօրինակ, հնագիտությունը վաղուց է ապացուել, որ Ն. Ք. 3000-ական թվականներին Միջազգետքում համաշխարհային չափանիշի ջրմեղեն իրոք եղել է։ Հաշվարկված, հաստատված է, որ Նոյի տապանում իրոք հնարավոր էր գետեղել նկարազրվածի համեմատ պարունակություն։ Պատմական իրողություն է եղել Բաբելոնի աշտարակը (զիկուրատ) և այլն։ Այսօր այլևս անկանակած է, որ սուրբգորական տվյալներից ու տեղեկություններից որևէ մեկի ճշմարտապատում լինելու վերաբերյալ որևէ հնարավոր թերամավաստություն դատապարտված է գիտական հիմնավորվածություն չունենալու հետանկարից։

* Այս ժողովածի հիմնական դրույթներն իրեն գեկուցում ընթերցվել են «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովում, որը կայացել է 1999 թ. նույնի 21-24-ը Օշկանու։

Սուրբգրական բազմաթիվ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանին և հայ ժողովրդին, նույնական վավեր իրողություններ են և ցարդ սպասում են իրենց արժանի մեկնաբանությանը, իրենց արժանի գիտական և հասարակական զնամնատարածիչներ:

Դիրախտը ոռոգող գետը բխում էր Եղեմից՝ սկիզբ դնելով չորս գետերի, որոնք էին Փիտնը (Ծորոյ), Գեհոնը (Երասխ), Տիգրիսը և Եփրատը: Մրանք Հայկական լեռնաշխարհի հայտնի գետերն են, որ այսօր էլ շարունակում են իրենց մշտագոյն ընթացքը: Նշանավոր եղջի՞ «Հայաստան, երկիր որպահավայր, Դու մարդկայն ցեղի օրիան» արտահայտությունը սուկ բանաստեղծական երևակայություն չէ:

Ապացուցված է, որ հնդեվրոպական ժողովուրդների ամենահին նախանձները, այսպես ասած՝ նախալեզվով խոսող մարդիկ, բնակվել են Հայկական բարձրավանդակում, Տիգրիսի ու Եփրատի հովտում, Վանա լճի ավազանում. ապացուց, որով հաստատվում է քաղաքակրթության սկզբնավայր Եղեմ-դրախտի գտնվելը այդ տարածաշրջանում:

Վերոբիշյալը հաստատում են նաև Հայաստանի հնագույն տեղանունները, որ կապված են Եղեմի առաջին բնակիչների ժառանգմների անունների հետ: Այսպես, օրինակ, Խնուսում, Հարամիկ զյուղից քիչ հեռու, մինչև 1915 թվականը տեղի հայերը ցուց են տվել ծառերի մի պուրակ, որը կոչվել է Կայենի ծառեր հնադարյան անունով: Խնուսի դաշտի հարավային բարձր լեռը կոչվել է Ղամեքի լեռ:

Հանճարեղ բանահավաքը ու ժողովրդագետ Գարենցին եպիսկոպոս Սրբանձտյանցը (1840-1892) այդ կողմերում իր ականջով լսել է, թե Աբելի անմեղ արյունը թափվել է Խնուսի դաշտում, որի բլուակներից մեկը կոչվել է Կայենի գերեզման: Խնչպես տեսնում ենք, Հայաստանի աշխարհագրական-պատմական տեղանունները համարունչ են սուրբգրական տվյալներին և պահպանված են մինչև այսօր:

Գրականության մեջ Արարատը հաճախ է կոչվել Բիբլիական լեռ: Պետք է ասել, որ Արարատ լեռան վրա Տապանի հանգրվանումը միակ պարագան չէ, որ մեզ՝ հայերին կապում է ջրհեղեղի պատմության հետ: Կա և մի ուրիշ կարևոր՝ Կենսաբանական հանգամանքը: Զրիեղեղից փրկվեցին ուրեմն հոգի՝ նոյն իր կնոջ, նոյն երեք որդիները՝ Սեմը, Քամը և Հարեթը՝ իրենց կանանց հետ: Ըստ մեր ազգային, ինչպես նաև օտար պատմագրության, այս Հարեթից է սկզբնավորվել մեր ազգը: Աստվածաշնություն հիշատակված են նաև Հարեթի հաջորդները՝ Հարեթի թոռներ Թորգումը և Ասքանազը: Քանի որ Հին Աշխարհում ազգերն ու երկրները կոչվում են իրենց թագավորի անունով, մեր ազգը ու երկիրը նախապես կոչվել են Հարեթի, Թորգումի, Ասքանազի անունով: Իսկ երբ Թորգումի որդի Հայկը կատարեց ազգափրկիչ սիրանը՝ սպանեց մեր երկիր Անդրխումած Բաբեկոնի տիրակալ Բելին, Հայկի անունով մենք կոչվեցինք հայեր, մեր երկիրը՝ Հայք, Հայաստան:

Պատմագրությունը լիովին համապատասխանում է Աստվածաշնչի տառին և ոգուն: Հայ պատմագիրներն ուստամբահրել են տասնյակ սկզբնադրյուններ, որոնք իրենց հերթին համընկնում են Աստվածաշնչի ոչ միայն ԾԱնողոց Գրքի, այլև Հայաստանին և հայ իրականությանը վերաբերող բազմաթիվ ուրիշ հատվածների վկայություններին:

Հայ ժողովրդի մեծ անվանադիր Հայկի և Արա անմիշական հորից որդի ժառանձների վերաբերյալ պատմագրական տեղեկությունները իրենց հերթին վկայում են նաև Հայաստան երկրի բազմաթիվ տեղանուններով, այսինքն՝ հազարամյակներ ի վեր գործող ազգային աշխարհագրությամբ: Հայկը է հիմնել և իր անունով կոչել Հայկաշեն մեծ գյուղը: Նրա անունով են կոչված Հայկ դաստակերտը, Հայոց ձոր գավառը և այլն:

Հայկի անդրանիկ որդի Արամանյակն իր անունով է լեռը կոչել Արագած, իսկ նրա աստրոտի կալվածքը՝ ուստի Արագածոյ: Արամանյակի որդի Կաղմոսի անունով նրա աշխարհը կոչվել է Կաղմոսի Տուն (Տունն Կաղմեայ), որն, ի դեպ, Սարեւատանի թագավոր Թողարապալասար Առաջինի (Ն. Ք. 12-11 դր.) տարնըդրության մեջ հիշված է Կաղմուսի երկիր անվանումով: Հայկի թռո Բագի անունով Վանա ծովը կոչվել է Բգնումյաց ծով: Հայկի թռո Արամայիսն իր անունով իր բնակավայրը կոչուց Արմավիր, իսկ Գետն գետը՝ Երասխ: Հայկի թռոնորդի Ծիրափի անունով գավառը կոչվել է Ծիրակ: Հայկի մյուս թռոնորդի Ամասիան իր անունով Արարատը կոչել է Մասիս: Ամասիափի որդի Գեղամն իր անունով է կոչել Գեղ լեռը, Գեղարքունիք (Գեղամի արքունիքին պատկանող) բնակավայրը և ծովը, Գեղամի դաստակերտը, որը հետագայում Գեղամի թռո Գառնիկի անունով կոչվել է Գառնի: Գեղամի որդի Սիսակն իր երկիրն իր անունով կոչել է Սյունիք (Սիսակունիք-Սյունիք-Սյունիք): Պարսկական այդ երկիրը պարզ ձևով կոչել են Սիսական, որ մենք ևս օգտագործում ենք: Գեղամի թռո՛ հզոր և անվանի թագավոր Արամի անվամբ օտարները մեր երկիրն անվանել են Արամյան երկիր, Արմինիա, Արմենիա, մեզ՝ արամյաններ, արմեններ:

Այս և բազում այլ օրինակներ հաստատում են, որ Հայկը հիրավի մեր պատմական նախնին է: Բարեխայտարար, հայտնի է նաև Հայկի հայթության Բենին սպանելու ստուգ Ժամանակը՝ Ն. Ք. 2492 թվական, օգոստոս 11: Հայեն այդ օրվանից սահմանել են նոր տոմար՝ այն կոչելով Հայկա թվական կամ Հայոց Բուն թվական: Հայկական տոմարի հիմքում ըստունվել է 1460 տարիներից թաղկացած մի կայուն ժամանակամիջոց, որն, ի պատճիք Հայկի, կոչվել է Հայկա շրջան: Խմիշհայոց, Հայաստանյաց Եկեղեցին ցայսօր պահպանում է Հայկա տոմարի գուգահեռ հիշատակման ավանդույթը:

Հայկը բարձրագույն հեղինակություն է եղել ոչ միայն Հայաստանում: Պատահական չէ, որ 7-րդ դարի պատմից Սեբեսոս Արան մեծարութ է՝ անվանելով «Անհապես ազգացն»: Չորս դար անց այս բնորոշությունը հանգամանորեն հաստատում է վրացի պատմագիր Լեռնահ Մոռվելին իր «Քարթիի թագավորների կյանքը» հանրահայտ գրքում:

Երախտապարտ ժողովուրդն իր փրկարար հերոսի անունն անմահացրել է ոչ միայն երկրի վրա, այլև երկնքում մի մեծ համաստեղություն կոչելով Հայկի անունով: Եվ միանգամայն բնական է, որ Աստվածաշնչյան պատումներից մեկում Հորի Գրքում, Արարիչն իր բնրանով հիշատակում է նոյն շառավիղ Հայկի անունը՝ կապված նրա համաստեղության հետ: Անա այդ երիցս օրինյալ ու թանկացին հիշատակությունը, «Խելամո՞ւտ իցես կարգի Բազմաստեղաց, եւ քո բացեա՞լ իցէ

զպատրուակ Հայկին» («Վերահասու եղե՞լ ես Բազմաստեղյանի կարգին, բացե՞լ ես բողը Հայկ համաստեղության» (ԼՀ 31):

Աստվածաշնչում Թորգոնա տունը, Հայատանը և Օրա խորհրդանիշները հիշատակող հատվածներ շատ կան: Թորգոնա տունը երկու անգամ հիշատակված է Եղեկիելի Մարգարենության մեջ (ԽԵ 14 և ԼՀ 6): Հայք-Հայատանը Արարատյան երկիր անվանումով հիշատակված է Թագավորությանց Չորրորդ Գրքում (ԺԹ 37), Եսայու Գրքում (ԼՀ 38), Տորիթի Գրքում (Ա. 24): Երեմիա մարզարեն տալիս է Հայատանի զինական ոժերի հավաքական անվանումը՝ Ասքանազեան գունդ, Հայատանն անվանելով Արարատեան թագաւորության (ԾԱ. 27), ինչն արժանացել է Պատմահայր Մովսես Խորենացու հատուկ ուշադրությամբ:

Մինչև անցյալ դարի երկրորդ կեսը, մինչև, այսպես կոչված, մարդաբանական դպրոցի հանդես գալը, Հայոց պատմության ժամանակագրությունը, հայոց մեծաց ավանդական ծագումնաբանությունը կասկածի ենթակա չէր: «Համեմատական մեթոդով», սակայն, հետզհետև ավելի ու ավելի ոգևորվող օստար և հայ զիտնական-ները Հայոց հնագույն պատմությունը հոչակեցին Աստվածաշնչին արիեւտականորեն հարմարեցված... Գիտության անվան տակ հանդես բերվող այս ունայմամտության դառը պտուիները ցայսօր զգացնել են տալիս իրենց. տասնամյակներ ի վեր պաշտոնականացած այդ ունայմության հետևանքով մենք այսօր ստիպված ենք ժամանակ և եռանդ վատնել՝ ապացուցանելու, հաստատելու այն ամենը, ինչը դրա կարիքը բնավ չունի:

Չատ բան պետք է շտկվի, և աշխարհը պետք է իմանա, որ Պատմահայր Մովսես Խորենացին հայոց մեծաց ծննդաբանությունն ու ընդհանրապես ամեն բան շարադրել է՝ ծայրագույն բարեխմնակրթյամբ հավատարիմ մնալով ժամանակագրության սկզբունքին: Հանճարեղ Պատմահայրն ինքն է գրել, թե «Ոչ է պատմությին ճշմարիտ առանց ժամանակագրութեան»: Ժամանակն է աշխարհին հավատել, որ մեր ազգային պատմագրությունը զիտականորեն անթերի է, ճշմարտապատում և հոված հավատի:

Հայատանը պուրագրական երկիր է ոչ մեր կամոք, այլ ըստ մեր պատմական ճակատագրի: Ինչպես որ մեր ազգային ծննդաբանությունը ուղիղ գծով կապված է նախահայրերի նախահայր Նոյի, մեր երկիրը՝ Եղեմի հետ, այնպես էլ մեր երկիր ու ժողովրդի Ք. Հ. առաջին դարի պատմությունն ուղղակիորեն առնչվում է Նոր Կտակարանին:

Հայոց Արգար թագավորի և Հիսուս Քրիստոսի նամակակցությունը, որը հանգամանորեն նկարագրված է մեր ազգային պատմագրության մեջ, հավատության կարիքը չունի: Այն մեր ազգային պատմության, մեր հոգևոր մշակույթի փառավորացուն էջերից է: Արգար թագավորի սքանչելի հավատը, Փրկչի համբարձվելուց ամփական հետո պետականորեն քրիստոնեություն ընդունելը, Հոռմին, Պարսից տերությանը և որիշներին ևս քրիստոնեության կոչելը Հայոց Դարձի առաջին և հզոր արարն էր: Արգարի մահով այն մնաց ամկատար: Ստեղծված հասարակական-քաղաքական ավանդույթը, մանավանդ Հայատանում Թաղեսու և Բարդութիւնու առաջալների արգասավոր գործունեությունը սակայն, որով հիմնարկվեց Հա-

յաստանյաց Սկելեցու առաքելականությունը, մեծապես նպաստեցին երկունկես դար մետք Հայաստանում բրիստոնելության վերջնական հաստատմանը:

Նախախնամության կամրջ առկա է նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ-Տրդատ Մնձ համագործակցության մեջ: Աստվածային օգնականությամբ կատարվող բուժումներին դարձյալ միանում է Միածնի մասմակցությունը, այս անգամ՝ երազում հայտնվելու ձևով: Առաջին դեպքում Հայոց հողը սրբացակ Փրկչի կննդանազիր Պատկերով ու կննդամի Գրով, երկրորդ դեպքում՝ Միածնի նշած տեղում Խշման Սուրբ Ստեփանով, որը եղավ Մայր Տաճարի կենտրոնը: Նախախնամության ձևորոշ չէ՝ արդյոք, որ փրկել է Միածնաւշ Տաճարը 17 դարերի փորձություններից...

Հայաստան աշխարհի սուրբգրական խորհրդանշներից առաջինը, ամենահայտնին ու ամենահիշողականն անշուշտ, Արարատ լեռն է: Իր փառահին տևարով Արարատ լեռն ինքնին մի վեհագույն կորոր է՝ ի հիշատակ նոր մարդկության հայանայր նոյի և նրա ընտանիքի լոյս անդամների, որոնք փրկվեցին աշխարհակործան շրինեղեցից և անվնաս իշան Արարատյան դաշտ:

Եթե Արարատ լեռը Տապանի հանգրվանն է, ապա Արարատյան դաշտը՝ փրկվածների առաջին պատսպարանը: Արարատյան դաշտում նոյն սեղամ շինեց և Տիրոջ մատուցեց գոհության անդրամիկ ողջակեզր, առաջին մատաղը: Աստվածաշնչան տեղեկությունն այն մասին, թե նորագործ նոյն այդի տնկեց և վայելում էր իր այգու զիմին, Շամակում է, թե նոյն բնակություն հաստատեց Արարատյան դաշտում: Այդ է վկայում նաև հիշողությունը: Այս աղիթով մեծ ժողովրդագետ Գարեգին Սրբանաւոյնց զրել է. «Տեսած եմ Հին Նախիջևանու գերեզմանատան մեջ մի ցած կամարով ծածկված շատ հին գերեզման, զոր հայր և պարսիկ նոյի գերեզման կանվանեն: Նույն օրինակ մի գերեզման ևս Մարանու քաղաքի մեջ կա, ուր բնակիչը բոլորովին պարսիկ են, բայց ճրագլուստվ կպատվեն այն շիրիմը և կպատմեն, թե նոյա կնոց գերեզմանն է, ինչպես որ մեր հնագնեսքն ալ Մարանու անունը կսուզարաբանն ՄԱՅԹ ԱՆԴ»:

Եթե Արարատը հավերժորեն պահպանելու է Տապանի փրկության խորհրդությունը, ապա Արարատյան դաշտի նյութական վկայություններն ու խորհրդանշները, ավագի, մշտական լինել չեն կարող: Եվ որովհետև Արարատյան դաշտից է վկայում նոր աշխարհի և նոր մարդկության վերածնունդը, մեր կարծիքով անհրաժեշտ է, որ պյատեղ, այս օրինյալ տարածքում լինի այդ վերածնունդը խորհրդանշող հուշակոթող: Այն կխորհրդանշի ոչ միայն Տապանում փրկվածների էջը Արարատյան դաշտ, ոչ միայն նոյի գոհարանական ողջակեզր՝ նոր մարդկության առաջին մատաղը, այլև կյանքի վերածնունդը՝ բովանդակ իմաստով:

Միաժամանակ, հուշակոթողը կարմնավորի հայ ժողովրդի և ամբողջ մարդկության մեծարանքի խորհրդություն նոյն նահապեսի մեծագործության հանդեպ:

Փափագելի է, որ սույն հուշակոթողը կանգնեցվի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հաստատելու 1700-ամյակի միջազգային տոնակատարությունից առաջ: Դրանով զգալապես կընդլայնվի տոնակատարության բովանդակությունը: Այն կիառնա ըստ ամենայնի համամարդկային:

Աստվածաշնչը վկայում է, թե շրինեղեցի հետո նոյն ապրեց երեք հարյուր և հիսուն տարի: Անկասկած է, որ այդ ամբողջ ժամանակամիջոցում նոյն ապրել է

Արարատյան դաշտում: Մի՞թե պատահական է, որ նրա և նրա կնոջ գերեզմանը ժողովուրդը ոչ մի ուրիշ Վայրում ցուց չի տվել: Ուրեմն, կանգնեցվելիք հուշակոթողը, 1700-ամյակի համզամանքից անկախ, պատմամշակութային անհրաժեշտություն է:

Կյանքի վերածնունդով վերընջուղվեցին հայ ժողովորի նախաջրինելելյան արմատները: Հայաստանի լեռներն ու ձորերո փրկված շատ արժեքներ են պահպանել նաև նախաջրինելյան մեր քաղաքակրթություննեց: Դրան գումարվում է այն ամբողջ մշակույթը, որն ստեղծվել է Հայաստան աշխարհի սուրբգրական հողի վրա՝ վերջին հինգ հազար տարիների ընթացքում: Դա մեծարժեք և ինքնատիպ ներդրում է համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

25. 04. 1999

